



Թիւն» (Քէչիշեան Հ. Մ., Յուլ. հայ. Ձեռ. 2 մասի, Թ. 127, անտիպ):

Յաջորդ տարին հաւանաբար միեւնոյն Մեղիքիսթ կը գրէ Ժամագիրք մը եւս «ի դաւանան Խորհիւնի, ի Կեղա լեան ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին» (Տաշեան, Յուլ. Վիենն. Միսիթ. Մատ. ի, էջ 517):

Ս. Աստուածածնի վանքը օժտուած է շատ հողերով եւ կայրուածներով, Պարսկահայ մը բաւական մեծ հարստութիւն նուիրած է. սակայն անխնամ ձգուած է (Արեւելք, 1898, Թ. 3882, 3887. Տարեգիրք Քղիի, էջ 16, 103, 107. Բիւզանդիոն, 1901, Թ. 1521):

3. Ս. ԳԵՈՐԳԻ ՎԱՆՔԸ

Տ. Վ. Պալեան կը գրէ՝ «Կը նշանակուի Քղիի մէջ (տե՛ս Նոր Մատենագրութիւն, Վեներիկ 1878, էջ 225), բայց այս վանքի եւ տեղւոյն վրայ որ եւ է տեղեկութիւն եւ ծանօթութիւն չունին նոյն իսկ տեղացիք ալ» (Բիւզանդիոն, 1901, Թ. 1521): Կը գտնուի Ասաղբերդի մօտ եւ ունեցած է բարեհամ եւ յորդառատ աղբիւր (Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 108):

4. Ս. ԴԱԹԻ ՎԱՆՔԸ

Քղի քաղաքին լեռան վրայ, Ս. Կարապետի մէկ ճիւղը կամ մասը: Եղած է Առաջնորդարան: Աւերակ (Տարեգիրք Քղիի, էջ 41—42):

5. ԽԱՆԻ-ԷՍԻ ՎԱՆՔԸ

Հանգստունի մէջ, ուխտատեղի, դուցէ եւ վանք (Տարեգիրք, էջ 41, 17 եւ 103. հմմտ. աստ Ս. Աստուածածնի եւ Ս. Կարապետի վանքերը եւ Ինճիճեան Հ. Ղ., Նոր Հայաստան, էջ 107):

6. Ս. ԿԻՐԱԿՈՍԻ ՎԱՆՔԸ

Յոսնակ (Պօսնակ, Օսնակ) դաւառակի մէջ. Ասաղբերդ գիւղի եւ համանուն գետի մերձ, անտառախիտ եւ ջրարբի վայրի մը մէջ: Եկեղեցւոյն չորս պատերը դեռ կանգուն, մինչ ուխտաւորներու սենեակները շատոնց քայքայուած: Ժամանակ մը Քղիի առաջնորդարան եւ կրթական վարարան եղած: Գրուած են հոն բաւական թուով Ձեռագիր-

ներ: Միեւնոյն դարուն մէջ (ԺԹ.) Մանագիրացի Աւետիս վարդապետը զայն նորոգած է եւ Մինաս վարդապետը հոն արդիւնաւորուած: Հարուստ եղած է հող ու կայրուածով (Բիւզանդիոն, 1901, Թ. 1521, հմմտ. անդ, 1899, Թ. 782, Արեւելք, 1898, Թ. 3882, 3887. 1889, Թ. 1714, Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 108, Տարեգիրք Քղիի, էջ 16, 24, 41, 43, 103 եւ 188—189):

7. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ

Ս. Կարապետի վանքը բարձրացած է Քղի քաղաքին հիւսիսային կողմը՝ Քէօզմէր տաղի (Առիւծ լեռան) կատարին հարթավայրին վրայ: Քաղաքէն մէկուկէս ժամ հեռու է հետիոտն: Ունի զանազան անուաններ: Կոչուած է՝ Խլաշի (Ս. Կարապետի) վանք<sup>4</sup>, վասն զի համանուն նշանաւոր բերդին (Խալէ-պաշի) դիմացը կառուցուած է: Անուանուած է՝ Հանգստունի (Ս. Կարապետի) վանք, որովհետեւ Հանգստուն գիւղի հանդէպ հիմնուած է:

Յորջորջուած է՝ Ապարու կամ Առապարի (Ս. Կարապետի) վանք, զի համանուն քաղաքին մերձ կանգնած է<sup>5</sup>:

Առէքի Ս. Աստուածածնի վանքի հետ կը կրէ Գետահայեաց (Ս. Կարապետի) վանք, վասն զի մօտակայ Փոքր Գայլ գետի վրայ կը հայի (Բիւզանդիոն, 1901, Թ. 1521. Ինճիճեան, Նոր Հայաստան, էջ 107. Արեւելք, 1898, Թ. 3882. 1889, Թ. 1714):

Ս. Կարապետի վանքի շէնքին մանրամասն նկարագրութիւնը չէ եղած: «Վանքս Մշոյ Ս. Կարապետի մանրանկարն է, իր կազմութեամբ եւ իր անուշով, ունի ներքին սերտ աղերս մը այդ համազգային մեծ վանքին հետ՝ իրրեւ մէկ մասնաճիւղը անոր» (Տարեգիրք Քղիի, էջ 23):

Աւանդութեան համաձայն Ս. Կարապետի վանքը երբեմն մեհեան եղած է եւ ապա Գրիգոր Լուսաւորչին վանք-եկեղեցիի վերածուած:

<sup>4</sup> Կայ եւ Ագրակի Ս. Կարապետի վանք մը, որուն մասին ծանօթութիւն չունինք (Տարեգիրք Քղիի հայր. միութեան, էջ 24):

<sup>5</sup> Գ. Թուրիկեան, Եփրատեան Հայաստան, Քղի եւ շրջ. դաւառները, Փարիզ 1947, էջ 148, Տարեգիրք Քղիի հայր. Միութեան, Տիբրոյիտ, 1937, էջ 22—23. Տարեգիրքի այս ընդարձակ գրութիւնը Պոսի Ծ. Վ. Տէր Պօրենեանի գրչէն է, նախապէս ըլլա տեսած (1914) «Յիշատակարան» գրքի մէջ որ հրատարակուած է Արմաշի Գրարվանքի Ին. ամեակի տարի:

Կայ եւ ուրիշ աւանդութիւն մը, որ զայն Ներսէս Պարթևի հիմնարկութիւն գիտէ եւ անոր առաջին առաջնորդ կը ճանչնայ Խաղեպետի սուրբ — նշանակուած միեւնոյն կաթողիկոսէն (Թուրիկեան, Եփրատեան Հայաստան, էջ 148. Տարեգիրք, էջ 16, 25—26): Իսկ անոր անմիջական յաջորդ կը ներկայացնէ Ասորիկ եպ. Ապահունի (Տարեգիրք, էջ 26):

Սակայն ստույգ իրողութիւն է թէ Ս. Կարապետի վանքը շատ ուշ ժամանակի հաստատութիւն է: Անոր առջեւ ծանօթ վանասայրը կամ առաջնորդն է Մեղիքիսթ: Ոնո՞ւր յիշատակագրութեան համեմատ Խլաշիի վանքը փայլուն վիճակի մէջ է՝ «Փառք... արդ զրեցաւ սուրբ Աւետարանս յերկիրն Խորհիւն, որ Կեղի կոչի ի վանս, որ կոչի Խլաշի ընդ հովանեաւ սուրբ Կարապետին եւ այլ սրբոցն որ աստ կան հաւաքեալ ձեռամբ... կրօնաւորի Ոնո՞ւրիոսի: Արդ... յիշեալիք եւ զառաջնորդ վանացս զՄեղիքիսթ հայրպետ եւ զպատուելի քահանայս, որ աստ կան զՅովանէս քահանայ եւ զՄտեփանս քահանայ եւ զԱստուածատուր քահանայ եւ զՄեղիքիսթ ճգնաւորն եւ զԳրանիէլ սարկաւաքն, որ սպասաւորէ վանացս եւ մեզ: Նաեւ գհոգեաւ իսթուան զՈղու մեղիքն... զոր ետուն գրել սուրբ Աւետարանս եւ յեղին յիշատակ ի դուռս սուրբ Աստուածածնին եւ սրբոցն Ստեփանոսի Նախավկային եւ աստուածընկալ սուրբ Նշանին: Դարձեալ... յիշեալիք զեղկելի զըջակս զՈնո՞ւրիոսս եւ զԾնողան իմ եւ գհոգեաւ հայրն իմ Յովանէս քահանայ, որ ի վերայ մեր երախտիք ունի եւ զթղթին կոկոզն եւ զմարմառին տուողն ամէն: Գրեցաւ սուրբ Աւետարանս ի թուական ՊՂԱ» (Ակիւնեան, Հաւաք. Յիշատ., Տէր Աւետիսեանի, Նոր Զուգայի ցուցակէն, Թ. 52):

Մեղիքիսթի առաջնորդութեան ժամանակ միարաններու թիւը շատ աւելի եղած է քան որ վերոյիշուած յիշատակագրութեան մէջ գրուած է (հմմտ. Տարեգիրք, էջ 27 եւ Նօտարք, էջ 183):

Անոր նախորդները գուցէ եղած ըլլան Յովանէս (1305), Փիլիպպոս (1307), Մեսրոպ (1340), Ստեփաննոս (1364) եւ Կարապետ (1385) եպիսկոպոսները (Տարեգիրք, էջ 26):

Հաւանորէն ճշտագոյնս ԶԺԳ (1464)<sup>6</sup> եւ ոչ թէ՛ ԶԶԳ (1334) թուականին Ստեփաննոս եպիսկոպոսը կը գրէ Աւետարան մը ի գաւառիս «Խորհեաց ի վանքս, որ կոչի Խլաշի ընդ հովանեաւ սուրբ Կարապետի» եւ յիշատակագրութեանը շարունակութեան մէջ կ'արտայայտուի՝ «Գրեցաւ ձեռամբ անարհեստ եւ վատթար գրչի Ստեփաննոս եպիսկոպոսի ի գաւառիս Խորհեաց, ի վանս Խլաշի ընդ հովանեաւ սուրբ Կարապետիս եւ բազմահաւաք սուրբ կրօնաւորացս՝ տէր Յովանիսին, տէր Նիկողոսին, տէր Կիրակոսին, տէր Մեղիքիսթին, տէր Յովանիսին, տէր Մաղաքիային, տէր Սիմաւոնին, տէր Դաւիթին, տէր Աստուածատուրին, տէր Կարապետին նորարողըջ հասակին... յիշեցէք զհոգեւոր եղբայրն իմ զԱւնոփրիոսն եւ զզործակալքս սոցա զԹորոսն, զԴաւիթն, զՅակոբն...» (Սրուանձտեանց, Թորոս Աղբար, Բ., էջ 341. Նօտարք, էջ 218. Նախանեան, Արտուր Հայաստանի, էջ 150—152):

Մեղիքիսթի յաջորդներէն է Ներսէս եպիսկոպոսը, որուն խաչքարը 1522ին գետեղուած է տաճարին հիւսիսային գաւիթին մէջ սա յիշատակագրութեամբ՝ «Եւ Տէր Ներսէս եպիսկոպոս կանգնեցի զխաչս ի փրկութիւն հոգւոյ իմոյ» (անդ, էջ 27—28): Անոր թափուր գահը կը գրաւէ Մարգար(է) արքեպիսկոպոսը (1547), որ Աւետարան մը կազմել կու տայ եւ ուրախութիւնը կ'ունենայ տեսնելու եւ վայելու Դուկաս վարդապետ կեղեցին<sup>7</sup>, որ՝ փայլուն զործունէութիւն կ'ունենայ (Չամչեան, Պատմ. Հայոց, Գ., էջ 519. Տարեգիրք, էջ 28—30), ինչպէս այլուր՝ նաեւ Խլաշի վանքին մէջ, որուն առաջնորդն եւս եղած է: Վանահայրութեան պաշտօնը վարած են նմանապէս Պետրոս (1559), Մեղիքիսթ (1576), Յովհաննէս (1576), Մարտիրոս Տարօնեցի (1600—1639) եպիսկոպոսներն ու վարդապետները եւ անոնց պաշտօնավարութեան շրջանին Խլաշի վանքին մէջ կ'արդիւնաւորուին ուսուցչութեամբ եւ գրչագրութեամբ Կարապետ ու

<sup>6</sup> Կարդացուած է եւ ՊԺԳ (1364) եւ վերոյիշեալ Ստեփանոս եպիսկոպոսի մերձեցում (հմմտ. վերը):  
<sup>7</sup> Մեսրոպ կրէց 1588ին Աւետարան մը կը գրէ՝ «Ի քաղաքս որ կոչի Կեղի ընդ հովանեաւ Ս. Լուսաւորչին ի վարդապետութիւն տէր Դուկաս քաջ բարենապետին» (Տաշեան, Յուլյակ, էջ 736):

Թաղէոս վարդապետները, Բարաղամ դպիրը եւ ուրիշներ (Տարեգիրք, էջ 30—34): Իսկ Սրապիոն (= Գրեգոր ԺԳ. Կաթ.) Ուռնացիցին զայն կ'օժտէ Աստուածաշունչով եւ Պատմագիրքով (1606ին, հմմտ. անդ էջ 29. Արձազանք, 1888, էջ 129. Fink N., Verzeichnis der arm. Handschriften zu Tübingen, Ma XIII, էջ 108):

Շահարասեան վշտաշատ շրջանին Խլպաչի վանքը եւս անջութեան կ'ենթարկուի, բայց Մարտիրոս Վ. Բալուեցին զայն վերստին կը շինեց՝ իրեն աջակից ունենալով Փիլիպպոս քահանան (Տարեգիրք, էջ 33—34):

Կարող եւ դիտուն առաջնորդ եղած է՝ Ստեփանոս արքեպ. Խորձենցի (1639—1651), որուն օրով վանքին մէջ կը գործէին Կարապետ Վ. Մովսէս, Ղազար կրօնաւոր, Մարտիրոս, Մելքիսեղեկ, Թաղէոս Մշեցի եւ ուրիշներ (անդ, էջ 35): Անոր կը յաջորդէ Կարապետ արքեպիսկոպոսը (1663), որ յարմար կը գտնէ Բղի գաւառակին առաջնորդութիւնը Խլպաչի Ս. Կարապետի վանքէն Կեղի քաղաքը փոխադրել, սակայն շարունակելով նաեւ մենաստանին առաջնորդութիւնը (անդ, էջ 35—36): Նա Բարաղամ քարտուղին 1663ին ժամագիրք մը արտագրել կը հրամայէ (Հ. Բ. Սարգիսեան, Մայր Յուցակ, Բ., էջ 353—355. հմմտ. Fink, անդ, էջ 108): Կարապետի փոխումէն յետոյ Մշոյ Ս. Կարապետի նուիրակը Խլպաչի առաջնորդութիւնը կը ստանձնէ եւ հարկաւ ինքն ալ յուզումով կը կարգայ Խլպաչի մէջ Բարաղամ քահանային աշակերտած եւ ասոր Արէլ որդւոյն աշակերտակից Մելգոն Երէցի յուղիչ՝ «Ողբ ի վերայ թոռին իւր Սամելայ» (Տարեգիրք, էջ 34—40):

Մելգոն Երէց<sup>8</sup> գրչագրութեամբ կը գրադի, նաեւ Ստեփանոս արքեպիսկոպոս առաջնորդի օրով, 1694ին՝ «Ի Կեղի գաւառն (որ) Խորձիւն յորձորձի ի դուռն Ս. Կարապետին, որ Խլպաչ վանք կոչի յառաջնորդութեան Տեառն Ստեփանոսի» Մելգոն Երէց Յայտնաւորք մը կը գրէ եւ ստացողն է «Տո-

<sup>8</sup> «Մելգոն Երէց նշանաւորագոյն քահանան եւ վերատեսուչն եղած է Կարապետին: Թաղէոս է քաղաքին (Կեղի) Ս. Յակոբ թաղը՝ 1731ին. եկեղեցւոյն արտաքին պատին հիւսիս արեւելեան անկեան վրայ գրուած է Տապանաբարը՝ «Տէր Մելգոն քահանայ, որ գրեաց Յայտնաւորք եւ հանգեալ յայս թուին ՌձՁ» (Տարեգիրք, էջ 40):

նական, յերկրէն Տարօնոյ... ի մեծ ուխտէն Ապրանից վանի որ Ս. Կարապետ ու Ջորէհանգիտա կոչի...» (Հ. Ն. Ակինեան, Հաւաք. Յիշատ. Ձեռ. 1694, Հ. Պատուեանէն):

Մինչ Մելգոն Յայտնաւորքը 1694ին Տոնականի համար կը գրէր, քանի մը տարի վերջ ալ Տօնական մը կ'արտագրէ՝ «Փառք... Արդ գրեցաւ սա (Տօնական) ի գաւառն Խորձիւնի, որ Կեղի ասի ի դուռն Ս. Յակոբայ եւ սուրբ Աստուածամօրն ի թվին Հայոց Ռձձ (1721) ամսեանն... ձեռամբ Մելգոն Երէցու ի հայրապետութեան տէր Աստուածատուր կաթողիկոսի եւ Կեղո(յ) առաջնորդի Ստեփանոս արքեպիսկոպոսի եւ Դերձնոյ առաջնորդի եւ դիտապետի տէր Ղազար վարդապետի եւ եպիսկոպոսի Երկրի տէր Գասպար Ծերունի սաղմոս երգողի: Եւ այժմու դառն ժամանակի երեւելի քահանայից քահանայ տէր Պաղտասարի եւ տէր մահտեսի Աստուածատուրի եւ նորին աշակերտի տէր Կարապետի, որ յոյժ ջանք արաւ բարի խրատով յուկն ուայիս Սարգսի (ստացող գրքին) ... Այլ եւ կրկին յիշեցէք զտէր Ղազար վարդապետն Մերտինցին, որ բազում ջանք եւ աշխատանք ունի ի վերայ տանն գրիգորաչէն սուրբ Լուսաւորչի տաճարին եւ սուրբ Դաւթայ խորանին: Սա եկն ի տունն Լուսաւորչաչէն, մէկ փալատի կտոր չիկա, այս սուրբ տանս ամայի եւ անբնակ էր եւ աղբիւն ի ծունկս մարդկանց ելանէր: Սա հրամանաւ սուլթանին Տաճկաց... (դատարկ) եւ (յ) երկրիս պարոնին Ահմատ պակին յոյժ քաջութիւն արար. աղբիւրքն ցամաքեալ էին յորդորեցոյց, խաչինս բազմացոյց, զքայքայեալսն կանգնեաց, զաւերեալսն շինեաց տուգանօք եւ աշխատանօք, զհանդերձեղէնս բազում ժողովեաց... չէն եւ պայծառ պահէ գտունն զայն... Այլ եւ յիշեցէք զմեղաւոր եւ անպիտան ծրողս Մելգոն Երէցս Կեղեցի, որ բազում տուգանօք եւ աշխատանօք գրեցի... եւ զամուսինն իմ գԱնան, որ բազում երաշխաւոր է...» (Ակինեան, Հաւաք. Յիշատ. Ձեռ. էջմ. 991):

Ստեփանոս արքեպիսկոպոսը շինել կուտայ Հանգստունի Ս. Խաղ եկեղեցին, ինչպէս արձանագրութիւնը կը վկայէ՝ «Աջողականութեամբն Աստուծոյ անեղին գերակայացաւ ի վերայ հովտին եկեղեցիս ձեռամբ վանահօր Ս. Կարապետին Կեղւոյ Ստեփաննոսին ՌձՁԲ» (Տարեգիրք, էջ 41):

Ստեփանոսի յաջորդներէն Յովհ. Ծ. վարդապետը զժուարութիւններու կը հանդիպի եպիսկոպոսական ձեռնադրութեան համար, իսկ ասոր յաջորդը Մարտիրոս Ծ. Վ. Պիլիպիւլ շինարարական գործունէութեամբ կը փայլի: Անոր քայքայուց կը հետեւի նաեւ (իր որդին) Յովհաննէս Վ. Պիլիպեան (1839), որմէ վերջ Ս. Կարապետի վանահայրութեան պաշտօնը կը ստանձնեն Մատթէոս Վ. Թաշճեան († 1891), Իսրայէլ Ծ. Վ. Վանեցի (1845—1850), Յովհ. Ծ. Վ. Շէյխլանցի (1858—1859), Մամբրէ Ծ. Վ. Մամիկոնեան (1859—1868), Եփրեմ Ծ. Վ. Բինկեանցի (1871—1878), Խորէն Ծ. Վ. Շահնազարեան (1877—1880), Ներսէս Ծ. Վ. Խարախանեան (1880—1889), Մեսրոպ Վ. Թովմասեան (1890—1891), Արիստակէս Վ. Խաչատուրեան (1894—1899), Ներսէս արեւդայ Բզնունի (1899—1900, † 1913), Վահրէճ Ծ. Վ. Շահլամեան (1900—1901, † 1908), Երուանդ Ծ. Վ. Փերտահճեան (1904—1907) (մեռած իրրեւ առաջնորդ Բուլղարահայութեան), Պսակ Ծ. Վ. Տէր Խորէնեան (1907—1912), Գեղամ Վ. Թէվէթէլեան (1912, 1914, հմմտ. Տարեգիրք, էջ 42—47):

Քղիի Ս. Կարապետի վանքը, ինչպէս կը տեսնուի, տուած է կարող անձնաւորութիւններ, եղած է լաւ եւ այցելուած կրթարան եւ առաջնորդարան գաւառակին: Սիրելի ուխտավայր եղած է: Երկար ատեն ենթարկուած է Մուշի Ս. Կարապետի: Ունեցած է ձեռագիրներ եւ օժտուած շատ կալուածներով, բայց վերջին շրջաններուն անխնամ ձգուած (Արեւելք, 1889, թ. 1714. 1898, թ. 3882. Բիւզանդիոն, 1900, թ. 1008. 1901, թ. 1521. Տարեգիրք, էջ 23—48 եւ 188—189. Տաճար, 1912, էջ 354):

8. Ս. Փրկչի վանքը կը շինուած նաեւ Ամենափրկչի վանք, Սերկիւլի գիւղի մօտ է: Փոքր: Անխնամ մնացած: Հողերը չհասնողորձուած (Արեւելք, 1898, թ. 3882. Բիւզանդիոն, 1901, թ. 1521. Տարեգիրք, էջ 103): Սիրուած ուխտավայր (Էփրիկեան Հ. Ս., Բնաշխ. Բառարան, Բ., էջ 213):

9. Քելեկեղեցի վանքը կը շինուած Ստեփանոս արքեպիսկոպոսը շինել կուտայ Հանգստունի Ս. Խաղ եկեղեցին, ինչպէս արձանագրութիւնը կը վկայէ՝ «Աջողականութեամբն Աստուծոյ անեղին գերակայացաւ ի վերայ հովտին եկեղեցիս ձեռամբ վանահօր Ս. Կարապետին Կեղւոյ Ստեփաննոսին ՌձՁԲ» (Տարեգիրք, էջ 41):

Բնաշխ. Բառարան, Բ., էջ 411): Սաի 1307ի ժողովին կը մասնակցի «Յովսէփ հայրն Քելեղական վանից» եւ «Հայրապետ հայր վանից Քելեղական» 1342ին կը ստորագրէ Մխիթար կաթողիկոսի ջատագովական թուղթը (Պալճեան Հ. Ա., Պատմութիւն Կաթ. վարդապետութեան ի Հայս, Վիեննա 1878, էջ 74, 275, 281 եւ Տարեգիրք, էջ 16):

Բ.  
ԽՆՈՒՍԻ ՎԱՆՔԵՐԸ  
Խնուս կամ Խնուն Կարնոյ կուսակալութեան ենթարկուած է եւ սահմանակից է Բասենի<sup>1</sup>, Ալաշկերտի, Վարդոյի, Մանազկերտի եւ Պուլանըլի:

1. ԳՈԳՍՈՒԱՅ ՎԱՆՔԸ  
Խնուս գաւառակի մէջ «Գտնուում է մի գեղեցիկ ձորի մէջ... պատերը փլած են եւ մնացել է միայն խորանը: Գուցէ ժ. դարուն հիմնուած: Սրբատաշ քարի մը վրայ կայ՝ «Շինեցաւ եկեղեցիս ի թագ. Աշոտ...» (Նոր Դար, 1897, թ. 121, ուր եւ Խնուսի միւս վանքին՝ Մեծկերտի մասին):

2. Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ  
Խնուսի Մփնկերտ գիւղին արեւելեան կողմը հիմնուած էր՝ «հաստահիմն վանք մի գմբէթաւոր», բայց տխուր վիճակի մատնուած եւ իր «բազմաթիւ կալուածներէն» զրկուած ու կողոպտուած (Հայրենիք, Ամսագիր, 1949, էջ 87—88. Միրախորեան, Ուղեւորութիւն, Գ., էջ 115—116. Սրուանձատեանց, Համով Հոտով, էջ 103 եւ Բիւզանդիոն, 1901, թ. 1521. Լուսարարեան, Գաւազանագիրք, էջ 138. հմմտ. եւ Գրուասայ վանքը):

3. Ս. ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ՎԱՆՔԸ  
Խնուսի Եաքա-Յովհաննէս գիւղը կը թուի թէ իր անունն առած ըլլայ իր մօտը գտնուած «վանքի մը աւերակէն» (Լուսարարեան, Գաւազանագիրք, էջ 138):

Հ. Հ. ՈՍԿԵԱՆ

<sup>1</sup> Բասենի ու Բայազետի վանքերու մասին այլուր՝ քննարկած է: